

«ՍԵՆՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ  
ԱՌԱՔԵԼԱԳՈՅՆ ՉԱՓԻ ՊԻՏԻ ԴԻՄԵՆՔ»

Կ'ԸՍԵ ՓԱՔԻՍԱՆԵԱՆ ԲԱՆԱԿԸ

Փաքիստանեան բանակի բանբեր Աիմետ Շարիֆ Շաուտարի յայտարարեց. «Սեուտական Արաքիոյ պաշտպանութեան մէջ առաւելագոյն չափի պիտի դիմենք»:  
Ան շեշտեց, որ Փաքիստանը «դիւանագիտական եւ զինուորական գետնի վրայ» Սեուտական Արաքիոյ կողքին կը կանգնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՅՆՃԱՐԸ՝  
ՍՓԻՒՌԻ ՓՈՓՈԽՈՒՈՂ  
ՔԱՐՏԵՍԻՆ ՎՐԱՅ  
(ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԻ  
111-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Մուսա լերան հերոսամարտի հերթական նշումը կը զուգակցուի Սուրբ Խաչի տօնին հետ: Դերոսամարտը, թեւ շաբաթ մը ուշ կը նշուի կրօնական տօնէն, այդուհանդերձ զուգակցումի խորհուրդը կը պարփակէ իր մէջ:

Խաչով գողգորթան հաւատքի մը, այս պարագային կրօնական արժէքներու ամեն գնով կառչած մնալու, ի զին ամեն տեսակի զոհողութեան, կեանքի գնով անոնցմէ չիրաժարելու եւ մանաւանդ այդ հաւատքը տարածելու խորհուրդը կը պարփակէ իր մէջ:

Մուսա Լեռը այս պարագային ազգային գողգորթան պատուով բարձրանալու, ազատ ապրելու, բնօրրանը չքելու, հետեւաբար նաեւ այդ արժէքներուն կառչած մնալու հաւաքական ուխտն է: Այդ արժէքներէն չիրաժարելու համար նահատակուիլը նոյնիսկ:

Խորհրդաբանութիւնը կը շարունակուի խաչի հետ զուգակցումին, երբ փրկութեան դրօշին վրայ պատկերուած կը տեսնենք խաչը: Այս անգամ փրկութեան խորհուրդին մէջ ազատ ապրելու, թշնամիին չենթարկուելու եւ մանաւանդ այդ արժէքներուն համար նոր բնօրրաններ կառուցելու անտեղիտալիութիւնը:

Այդ նոր բնօրրաններէն մէկն է հայկական Այնճարը, ուր կը շարունակուի արժեքապահանքութիւնը: Այս սկզբունքայնութեան իմաստը կը բազմապատկուի, երբ հարթիչ գլան մը կը բանի ճգմելու, վերափոխելու, իմաստագրկելու միջեւ հիմա դաւանումը: Դակադրելու պատմական ու ներկան, տեսլականն ու իրականը, հակադրելու խորհրդանշիչները, սահմանափակելու հայրենիք հասկացողութեան տարածքը, հեզնելու հայրենասիրութիւնը, բնութագրելու սփիւռքը իբրեւ օգտագործուած ապրանք ուղարկող անգլուխ կեդրոն մը:

Արժեքափոխութեան այս արշաւին դէմ ամուր կանգնած է հայկական Այնճարը, հաւատարիմ՝ Մուսա լերան սկզբունքայնութեան, միասնականութեան, հայրենասիրութեան եւ արժէքներու պահպանման եւ տարածման հաւատամքին:

Այնճարը պատուար է վերափոխման այս քաղաքականութեան դէմ եւ օրինակ՝ համախումբ ապրելու, հայատրոփ միջավայր ստեղծելու, եկեղեցական կեանքով ապրելու, մշակոյթը արդիականացնելու եւ անով ապրելու, հայ մարգական կեանքին թափ տալու, բանակումներ հիւրընկալելու:

Այնճարը եզակի միջավայր է ամբողջ հայկական սփիւռքին մէջ իր հայկականութեամբ:

Այնճարը, իբրեւ Մուսա լերան միջավայրային շառաւիղը, սփիւռքի ուշադրութեան կիզակէտին յայտնուելու բոլոր պատճառները ունի: Վերափոխուող սփիւռքի, ժողովրդագրական պատկերներու կտրուկ փոփոխութիւններու ենթարկուող մեր համայնքներու յորձանուտին մէջ Այնճարը կը պահէ իր դիմագիծը, իր հայեցիութիւնը, իր հայկականութիւնը, իր եռութիւնը՝ արժեքամակարգի շարունակումի եւ ծաղկումի առումներով:

Նօսրացումներու եւ նախկին դրուածքներու համատարած փոփոխութիւններու այս ընդհանուր հողմին մէջ, հայկական Այնճարը բոլոր պատճառները ունի արժանանալու համահայկական ուշադրութեան: Եւ եթէ այսօր Երեւանը չ'ուզէր զբաղիլ յայտարարուող տարածութենէն դուրս գտնուող հայութեամբ, ապա սփիւռքեան կազմակերպութիւնները բոլոր պատճառները ունին սփիւռքի այսօրուան եւ փոփոխուող քարտէսին բոլոր շարժումները խորապէս քննարկելու, միտումները կանխատեսելու եւ անոնց մէջ նկատելու Այնճարի հաստատեւելու դիրքը, հայկականութեան եզակի միջավայրը, մնացող բնակչութիւնը: Դայութեամբ շնչող, արարող եւ բնօրրանին կառչած, Մուսա լերան հերոսներուն դաւանած արժէքները պահպանող այնճարահայութիւնը:

ՔԱՅ. «ԵԹԵ ԷՐՏՈՂԱՆ Կ'ՈՒԶԷ ԿԱԶԱՅԻ ՄԷՋ  
ԻՐ ԳԱՐԱՓԱՐԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՕԳՆԵԼ, ԹՈՂ  
ՉԱՆՈՆՔ ԱՆԹԱԼԻԱ ՏԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒ ՕԳՆԵ»

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Իսրայէլ Զաք առաջարկեց, որ Թուրքիան հիւրընկալէ Կազայի մէջ Զամաս շարժումի անդամները:

«Իսրայէլ պիտի շարունակէ գործել իր ապահովական նպատակները ամբողջացնելու եւ Երաշխաւորելու համար, որ 7 հոկտեմբեր 2023-ի սպառնալիքը չվերադառնայ», նշեց Զաք:

Իսրայէլի պաշտպանութեան նախարարը աւելցուց, որ եթէ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան կ'ուզէ «Կազայի մէջ իր գաղափարա-

կից եւ ուղեկից եղբայրներուն օգնել, թող օգնէ զանոնք տեղափոխելու Անթալիա, ուր իսրայէլացի զօսաշրջիկներու բացակայութեան պատճառով ընդարձակ դատարկ տարածքներ կան»:

Իսրայէլ-Թուրքիա յարաբերութիւններու լարուածութեան ստեղծումէն եւ երկու երկիրներուն միջեւ թռիչքներու դադրեցումէն առաջ Անթալիան մեծաթիւ իսրայէլացի զօսաշրջիկներ կը հիւրընկալէր:

ՌՈՒՄԻՈՅ ՄԷՋ ԵՌՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ  
ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԹԱՅՔ ԱՌԻՆ

Ռուսիոյ մէջ երէկ ընթացք առին Պետական տումայի ընտրութիւնները: Զուտարկութիւնը պիտի տնէ երեք օր՝ մինչեւ 20 սեպտեմբեր: Զուտարկութիւն տեղի կ'ունենայ նաեւ Ուքրանիոյ մէջ Ռուսիոյ վերահսկողութեան տակ գտնուող տարածքներուն մէջ:

450 աթոռներ բաղկացած Տումայի ընտրութիւններուն կը մասնակցին 10 կուսակցութիւններ՝ իշխող «Ետիկիա Ռուսիա»-ն, Զամայնավար կուսակցութիւնը, ԼԴՊՈՆ-ն, «Նովիէ լիուտի»-ն,

Շար.ը՝ էջ 8

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՄՊԱՆԸ  
ԱՅՑԵԼԵՑ «ՇԱՂՁՈՅԵԱՆ» ԿԵԴՐՈՆ

Զայաստանի Զանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Սարմէն Պաղտասարեան եւ հիւպատոս Սեդրակ Սարգսեան այցելեցին «Շաղղոյեան» կեդրոն եւ տեսակցեցան ԶՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալապանեանի, Կեդրոնական կոմիտէի անդամ Արծիւ Տեր Խաչատուրեանի եւ «Ազդակ»-ի տնօրէն Շահան Գանտահարեանի հետ:

Ալպեր Պալապանեան բարի գա-



լուստ մաղթեց հիւրերուն եւ ներկայացուց «Շաղղոյեան» կեդրոնին մէջ

Շար.ը՝ էջ 8

ԶՅԴ ԵՐՈՊԱՅԻ ԶԱՅ ԴԱՏԻ  
ԳՐԱՍԵՆԱԿԻՆ ԲԱՅ ՆԱՄԱԿԸ՝  
ԱԼԻԵԻ ԶՐԱԼԵՐՈՎ ԲՈՆԱԳՐԱՐՈՒԱԾ  
ԱՐՑԱԽ ԱՅՑԵԼԱԾ ԿՐՈՆՈՅԻՆ

ԶՅԴ Եւրոպայի Զայ դատի գրասենակը բաց նամակ յղեց Զարաւային Կովկասի մէջ Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Մակտայենա Կրոնոյին՝ «խոր հիասթափութիւն» յայտնելով վերջինիս մասնակցութենէն՝ Ազդրպէյճանի կառավարութեան կազմակերպած դէպի բռնագերաւուած Արցախ այցելութեան:

Բաց նամակին մէջ ԶՅԴ Եւրոպայի Զայ դատի գրասենակի նախագահ Գասպար Կարապետեան խստօրէն կը դատապարտէ Եւրոպացի պաշտօնատարներուն մասնակցութիւնը Պաքիստանի բեմադրուած ցուցադրութեան՝ նշելով. «Ինծի համար՝ իբրեւ Եւրոպական Միութեան 13 անդամ պետութիւններուն մէջ յանձնախումբեր ունեցող եւրոպական հասարակական կազմակերպութեան նախագահ եւ պարզապէս իբրեւ Եւրոպացի քաղաքացի, որ կը հաւատայ, թէ մարդկային արժանապատուութիւնը անձեռնմխելի է, ցաւալի էր ականատես ըլլալ, թէ ինչպէ՛ս Եւրոպացի բարձրաստիճան դիւանագետները դարձան Պաքիստանի բռնապետական վարչակարգին կողմէ մանրակրկիտ մշակուած ներկայացման մասնակից»:

Շար.ը՝ էջ 8

ՇՈՅԿՈՒ. «ՌՈՒՄԻԱՆ ԵՐԵԽԱՆԻ՝  
ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵՑ  
ԶԱՄԱՐԿՈՒՄԸ ՊԻՏԻ ԶՖԻՆԱՆՍԱՐՈՒՐ»



Ռուսիան չի պատրաստուիր ֆինանսաւորելու Զայաստանի՝ Եւրոպական Միութեան հետ համարկումը, եւ Երեւանի այդ ուղղութեամբ իւրաքանչիւր քայլը ունի առարկայական հետեւանքներ: ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտնած է Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Սերկէյ Շոյկու՝ Անվտանգութեան խորհուրդի գիտափորձագիտական խորհուրդի նախագահութեան անդամներու խորհրդակցութեան ժամանակ:

Շար.ը՝ էջ 8

ԶԱԾԻՏ. «ԶԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՍՓԻՒՐԻ  
ՄԷՋ ՎՐԵԺՆԵՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ  
ԿԸ ՓՈՐՁԵՆ ԽԱՊԱՐԵԼ  
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԶՈՒՎՈՅԹԸ»



Զայաստանի հետ խաղաղութիւնը բարդ պայքար է, սակայն Ազրպէյճան յանձնառու է պահպանելու իր տարածքին մէջ գտնուող քրիստոնէական ժառանգութիւնը: Այս մասին Տուպայի մէջ «Եւրոնիւոզ Ֆորում»-ի կլոր սեղանին ժամանակ ըսած է Ազրպէյճանի նախագահի օգնական Զիքմէթ Զաճիւ:

«Զայաստանի հետ խաղաղութիւնը բարդ պայքար է, սակայն Ազրպէյճանը յանձնառու է պահպանելու իր տարածքին մէջ գտնուող քրիստոնէական ժառանգութիւնը, որովհետեւ անկիւա իր պատմութեան մասն է: Զայաստանի մէջ եւ հայկական սփիւռքի մէջ վրեժխնդրական ուժերը տակաւին ուժեղ են եւ կը փորձեն խաթարել նախկին հակառակորդներուն միջեւ պատմական խաղաղութեան հողովոյթը», ըսած է Զաճիւ:

Շար.ը՝ էջ 2

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՒՐՈՒԱԾ  
ԹԻԻԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԴՈՐԵՆ  
ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԿԱՅԾԱԿ ԵՒ ԾՈՎԻԿ ԶԷՅԹԼԵԱՆՆԵՐ







# ԻՆՉԻ՞ ԿԸ ԾԱՌԱՅԵ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերամուտ է, եւ մենք դարձեալ կը վերադառնանք դասերուն, պարտականութիւններուն... Կան նիւթեր, որոնք մեզի մեծ հաճոյք կը պատճառեն, կան նաեւ նիւթեր, որոնք շատ չենք սիրեր: Սակայն հակառակ ասոր՝ մենք ստիպուած ենք սորվելու բոլոր նիւթերը, որովհետեւ անոնք անհրաժեշտ են մեր ապագան կաշտելու համար: Իսկ այս նիւթերն մէկն է թուաբանութիւնը: Ան կարեւոր դեր ունի մեր ուսման մէջ:

\*\*\*


Թուաբանութիւնը թիւերու եւ ձեւերու գիտութիւնն է: Ան մեզի կ'օգնէ հասկնալու, թէ ինչպէ՛ս կը բանին աշխարհը եւ միւս գիտութիւնները, ինչպէ՛ս՝ բնագիտութիւնը, քիմիագիտութիւնը, համակարգիչի գիտութիւնը... Մասնագետները թուաբանութեան պէտք ունին զարգացնելու համար իրենց արհեստագիտական սորութիւնները, որոնք յեղափոխութիւններ կը յառաջացնեն աշխարհին մէջ: Համացանց, օդանաւեր, հրթիռներ, դրամատան, քարտեր... այս բոլորը գոյութիւն չեն կըրնար ունենալ առանց թուաբանութեան: Բազմաթիւ անձեր այս գիտութիւնը կը գործածեն նաեւ իրենց գործին մէջ, ինչպէ՛ս՝ ճարտարագետները, հաշուապահները, վաճառականները կամ ճարտարապետները:

\*\*\*

Իսկ ինչո՞ւ թուաբանութիւնը կ'ուսուցուի մանուկներուն: Անշուշտ որովհետեւ ան ապագային անոնց պէտք պիտի ըլլայ իրենց ասպարեզին մէջ... սակայն նաեւ, որովհետեւ ան արդէն անոնց օգտակար կրնայ ըլլալ իրենց առօրեայ կեանքին մէջ: Այո՛, խաղի մը ընթացքին կէտերը հաշուելը, **պոն-պոնները** բաժնուիլը կամ կարկանդակ մը պատրաստելը շատ աւելի դիւրին կը դառնան, երբ մենք հաշուել գիտնանք: Ամենէն կարեւորը՝ թուաբանութիւնը մեզի կը սորվեցնէ մեր ուղեղը տրամաբանական ձեւով աշխատցնել: Մեզ կը մղէ հարցադրումներ կատարելու, ապացոյցներ ներկայացնելու, եզրակացութիւններու յանգելու... այսինքն՝ պարզապէս ինքնուրոյն մտածելու:

\*\*\*

Կարգ մը անձեր կ'ըսեն, որ թուաբանութիւնը դժուար նիւթ մըն է, յատուկ՝ ամենէն փայլուն աշակերտներուն կամ տղոց: Ասկա ամբողջովին սխալ է: Աղջիկ եւ տղայ՝ բոլոր մանուկները կրնան հասկնալ եւ սիրել թուաբանութիւնը... պայմանաւ որ անոնք սորվին իրենց յատուկ կըշռոյթով, ինքնավստահութեամբ, կարծեք ան խաղ մը ըլլար:



## ՁԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԵՐ

### ՎԵՐԱՄՈՒՏԻ ՕՐԱՅՈՅՑ

Դպրոցական նոր տարեշրջանը սկսելու համար կրնաս պատրաստել այս գունաւոր օրացոյցը, որ քեզի պիտի օգնէ օրերը միտքդ պահելու եւ կարեւոր թուականները չմոռնալու:

#### Պէտք ունիս

30 փոքրիկ պատատ (խաւքարտ խողովակ), ջրաներկ, պարան մը կամ ժապաւեն մը, կորիզ (**սթէփլը**), մելան, մատիտ, ներկեր, մկրատ եւ բարակ ճիւղ մը:

#### Պատրաստութիւն

1.- Սկսէ նախ ներկելու շաբթուան 7 պատատները եւ ամիսներու 12 պատատները տարբեր գոյներով: Ձգէ, որ չորնան:

2.- Մնացած 11 պատատները ներկէ նոյն գոյնով: Անոնք պիտի ծառայեն 1-31 օրերու թիւերուն: Ձգէ, որ չորնան:

3.- Երբ պատատները չորնան, ամիսներու 11 պատատները 3-ի կտրէ: Իւրաքանչիւր կտոր պիտի

ծառայէ ամսուան մէկ օրուան: Հետեաքար պէտք պիտի ունենաս 31 օղակի:

4.- Սեւ մելան մատիտով մը շաբթուան օրերու պատատներուն վրայ գրէ շաբթուան օրերը, իսկ ամիսներուն վրայ՝ ամիսներուն անունները:

5.- 31 օղակներուն վրայ գրէ 1-31 թիւերը:


6.- Շաբթուան տարբեր օրերը իրարու կցէ, ապա ամիսներն ալ՝ առանձին: Օրերու պարագային կըրնաս գտնել 1-15 եւ 16-31 երկու շարքով կցել, կամ նոյնիսկ՝ 10, 10, 11 երեք շարքով: Եթէ կցիչ չունիս, կրնաս գործածել զօրաւոր խեժ:

7.- Տարբեր շաբթերը անցուր ճիւղին վրայ: Ճիւղին երկու ծայրերէն կապէ պարանը կամ ժապաւենը: Օրացոյցդ պատրաստ է, կրնաս գայն կախել: Պէտք պիտի ունենաս 3 լաթակալի՝ նշելու համար օրը, թիւը եւ ամիսը:


Բարի՛ վերամուտ:




## ԺԱՄԱՆՑ



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող 14 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել ելքի ճամբան:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած առարկաները:

|      |       |       |        |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
|------|-------|-------|--------|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7    | 8     | 5     | 4      | 7 | 2 | 1 | 4 | 6 | 3 | 3 | 2 | 9 | 2 | 1 |
| 1    | 7     | 3     | 5      | 1 | 6 | 8 | 2 | 3 | 7 | 8 | 8 | 9 | 4 | 7 |
| 7    | 6     | 3     | 4      | 3 | 8 | 3 | 9 | 7 | 6 | 6 | 4 | 9 | 3 | 4 |
| 9    | 3     | 1     | 4      | 9 | 3 | 3 | 8 | 3 | 8 | 8 | 9 | 7 | 8 |   |
| 8    | 3     | 9     | 1      | 9 | 9 | 3 | 8 | 4 | 3 | 1 | 8 | 9 | 6 | 7 |
| 4    | 4     | 4     | 6      | 5 | 2 | 8 | 3 | 8 | 6 | 9 | 4 | 5 | 8 | 8 |
| 3    | 1     | 5     | 5      | 2 | 6 | 4 | 2 | 5 | 4 | 4 | 2 | 7 | 4 | 5 |
| 5    | 6     | 3     | 2      | 7 | 8 | 7 | 6 | 8 | 5 | 9 | 1 | 3 | 1 | 7 |
| 4    | 4     | 5     | 6      | 5 | 6 | 1 | 7 | 6 | 7 | 1 | 2 | 5 | 9 | 3 |
| 6    | 1     | 7     | 6      | 8 | 1 | 9 | 4 | 3 | 6 | 4 | 1 | 3 | 7 | 9 |
| 8    | 9     | 3     | 9      | 4 | 3 | 4 | 7 | 9 | 7 | 2 | 3 | 9 | 3 | 1 |
| 6    | 2     | 1     | 3      | 9 | 8 | 1 | 3 | 3 | 8 | 4 | 9 | 3 | 1 | 8 |
| 9    | 2     | 2     | 6      | 4 | 5 | 1 | 9 | 2 | 1 | 5 | 1 | 8 | 4 | 2 |
| 6    | 3     | 4     | 9      | 2 | 1 | 8 | 4 | 8 | 3 | 9 | 7 | 6 | 3 | 1 |
| 3    | 6     | 1     | 2      | 7 | 9 | 3 | 5 | 5 | 7 | 3 | 8 | 3 | 2 | 6 |
| 225  | 1973  | 27584 | 168237 |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
| 496  | 3278  | 31412 | 573918 |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
| 553  | 4293  | 83923 | 773741 |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
| 717  | 6343  | 89394 | 839268 |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |
| 1338 | 16823 | 95735 | 839766 |   |   |   |   |   |   |   |   |   |   |   |

Կրնա՞ս գտնել տախտակին մէջ պահուած թիւերը:

Պատրաստեց՝ ՀՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍՅԱՆ





ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ  
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՍՊԻՏԱԿ  
ՏԱՆ ՄԵՋ ՀԱՆԴԻՊՈՒՄ  
ՈՒՆԵՑԱՆ ԹՐԱՄՓԻ ՀԵՏ



Միացեալ Նահանգներու մէջ հայ հոգեւոր առաջնորդներն ու Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանը Սպիտակ տան Օվալաձեւ գրասենեակին մէջ հանդիպում ունեցած են Թրամփի հետ:

Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը կը հարգորդէ. «Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատունը Սպիտակ տան Հաւատքի գրասենեակին հետ համագործակցութեամբ Նախաձեռնած է հանդիպում, որուն ծիրին մէջ Միացեալ Նահանգներու հայ հոգեւոր առաջնորդները եւ դեսպան Մկրտչեան հանդիպում ունեցած են Նախագահ Տանըլտ Թրամփի, Սպիտակ տան Հաւատքի գրասենեակի ղեկավար, Միացեալ Նահանգներու երկարամեայ հոգեւոր հովիւ Փոլա Ուայթ-Քելնի եւ Սպիտակ տան Հաւատքի գրասենեակի տնօրէն Ճէնիֆըր Ս. Զոնիի հետ»:

Դեսպանատան համաձայն, «հանդիպումի ընթացքին միտքեր փոխանակուած են Հայաստանի Հանրապետութեան եւ Միացեալ Նահանգներու միջեւ յարաբերութիւններու, երկու ժողովուրդներուն միջեւ քրիստոնեական-քաղաքակրթական կապերու, կրօնական ազատութիւններու, ինչպէս նաեւ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման ուղղուած ջանքերու շուրջ»:

«Կարելոր նկատուած է խաղաղութեան հաստատման եւ ժողովուրդներու միջեւ փոխըմբռնման ամրապնդման անհրաժեշտութիւնը՝ ընդգծելով հաւատքի եւ հոգեւոր արժեքներու նշանակութիւնը այս գործընթացին մէջ»:

«Հայ հոգեւոր առաջնորդները հնչեցուցած են հաւաքական աղօթք եւ Աստուծոյ օրհնութիւնը հայցած են Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու ժողովուրդներու բարօրութեան եւ ապագայի, երկու երկիրներուն միջեւ բարեկամութեան համար»:

«Հոգեւոր առաջնորդները իրենց աղօթքին մէջ անդրադարձած են նաեւ խաղաղութեան հաստատման ուղղուած ջանքերուն՝ ընդգծելով Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփի ներդրումը Հայաստանի Հանրապետութեան մէջ հաստատուած խաղաղութեան գործընթացին», կը նշուի հաղորդագրութեան մէջ:

ՀՅԴ ԵՐՈՊԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ...

Շարունակուած Ա. Էջէն

Կարապետեան կ'ընդգծէ, որ կայ տարբերութիւն դիւանագիտական կապերուն եւ պետական մակարդակով իրականացուող պատմական դէպքերու աղաւաղման հանդիսատես դառնալու միջեւ:

«Մենք լիովին կ'ընդունինք, որ Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչը պէտք է կայ հաստատե բոլոր կողմերուն հետ, եւ որ շրջակին անմիջականօրէն ծանօթանալը կարելոր է: Այնուամենայնիւ, Եական տարբերութիւն կայ տեղւոյն վրայ իրողութիւններուն անաչառ կերպով ականատես ըլլալուն եւ Ազգայնական կազմակերպած քարոզչական այցելութեան մասնակցելուն միջեւ: Կարելի է իրավիճակին ծանօթանալ՝ առանց վիրաւորելու արժանապատուութիւնը այն ժողովուրդին, որ ընդամենը երեք տարի առաջ բռնի տեղահանուեցաւ՝ ենթարկուելով սովի եւ շրջափակման», կը նշէ Կարապետեան:

Նամակը յատկապէս կը ընկալուի այն, թէ ինչպէ՛ս նման քարոզչական միջոցառումներ Պաշտօնի թոյլ կու տան «Եւրոպական Միութիւնը գործիք դարձնել» իր կատարած ցեղային գտումը օրինականացնելու նպատակով»: Կարապետեան կ'անդրադառնայ եւրոպացի պաշտօնատարներուն մտահոգիչ վարքագիծին, երբ անոնք հըրճուանքով կը պարելին Ազգայնական կառավարութեան կողմէ կազմակերպած խնդրին ընդամենը 3 տարի առաջ հայաթափուած Արցախի մէջ, եւ կը շեշտէ, որ նման վարքագիծ, անկախ անհատական դիտաւորութենէ, անխուսափելիօրէն քաղաքական կշիռ կը կրէ:

«Ինչ կը վերաբերի շրջանի պատմութեան եւ անոր մշակութային ժառանգութեան ակունքներուն, մենք համոզուած ենք, որ զայն բացայայտելու անկեղծ փափաքի պարագային, կան բազմաթիւ անաչառ պատմական վկայութիւններ: Յոյսով ենք, որ այս առումով ձեր կողմէ առկայ է անկեղծ հետաքրքրութիւն», կը նշուի նամակին մէջ:

Հզուացնելով հիմնարար սկզբունքները եւ մարդկային արժանապատուութիւնը անտեսող կարճատես քաղաքականութենէ՝ Կարապետեան կ'եզրափակէ. «Մենք կ'ընդունինք, որ Եւրոպական Միութիւնը տնտեսական եւ քաղաքական շահեր ունի Ազգայնական մէջ: Այնուամենայնիւ, դիւանագիտութիւնը, ուր կը գոհաբերուին ոչ միայն սկզբունքները, այլ նաեւ մարդկային արժանապատուութիւնը, արագօրէն կը վերածուի յանցակցութեան: Աւելին. տուեալ պահուն կրնայ թուիլ, թէ Ալեքի վարչակարգին հաճոյանալը կ'օգնէ դուրսէն նպատակներուն հասնելու ճամբուն վրայ: Սակայն այս մօտեցումը կարճատես է եւ յարգանք վաստկելու լաւագոյն հենքը չէ, նոյնիսկ այն կողմին մօտ, որուն կը փորձեն հաճոյանալ»:

ՀՀԴ Եւրոպայի Հայ դատի գրասենեակը կը վերահաստատէ Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչին հետ կառուցողականօրէն համագործակցելու իր պատրաստակամութիւնը, սակայն կը պնդէ, որ այցելութեան լռօնութիւնն ու խորհրդանշական բնոյթը հաշուի առնելով՝ բաց եւ ուղղակի երկխօսութիւնը անհրաժեշտութիւն է:

ՇՈՅԿՈՒ. «ՌՈՒՄԻԱՆ ԵՐԵՒԱՆԻ...»

Շարունակուած Ա. Էջէն

Ան նշած է, որ Երեւանի քաղաքականութեան մէջ կը նկատուի Հիւսիսատլանտեան դաշինքին հետ համագործակցութիւնը ընդլայնելու ակնյայտ ձգտում, ինչպէս նաեւ Հայաստանի բացայայտ սպառողական վերաբերմունքը ՀԱՊԿ-ի եւ ԵԱՀԿ-ի նկատմամբ:

«Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին ամբողջովին յստակ ձեւակերպած է այս առնչութեամբ մեր վերաբերմունքը. Երեւանը պէտք է հանրաքուէ կատարէ Եւրոպական Միութեան անդամակցելու կամ ԵԱՀԿ-ի մէջ մնալու վերաբերելով»:

«Կ'ուզեմ ընդգծել, Ռուսիան պատրաստ չէ եւ պիտի չգրադի Հայաստանի՝ Եւրոպական Միութեան հետ համարկման ֆինանսաւորմամբ, եւ այդ ուղղութեամբ իւրաքանչիւր քայլ ունի առարկայական հետեւանքներ», նշած է Շոյկու:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ...

Շարունակուած Ա. Էջէն

գործող կառոյցներն ու գրասենեակները: Ապա, խորհրդակցութիւնները կեդրոնացան տարածաշրջանային, լիբանանեան նորագոյն զարգացումներուն, Հայաստանի Հանրապետութիւն-Լիբանան միջպետական յարաբերութիւններուն վրայ՝ շեշտելով արդէն իսկ կայացած միջպետական համաձայնութիւններու գործարկման անհրաժեշտութիւնը: Անդրադարձ կատարեցաւ նաեւ Հայաստանի թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին քաղաքականութիւններուն եւ այդ շրջափոխին մէջ դիմագրաւած խնդիրներուն:

Դեսպան Պաղտասաբեան իր հերթին, շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան համար, արժեւորեց համայնքին մէջ տարուող կուսակցութեան բազմաոլորտ աշխատանքները եւ շեշտեց ներկայ ձեւաչափերով պարբերական խորհրդակցութիւններ ունենալու անհրաժեշտութիւնը:

ՌՈՒՄԻՈՅ ՄԵՋ ԵՌՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

«ՍփրակտելիաՎայա Ռոսիա»-ն եւ այլն: Իշխող կուսակցութեան ընտրական ցուցակը կը գլխաւորէ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով, առաջին հնգեակին մէջ են նաեւ Մոսկուայի քաղաքապետ Սերկէյ Սոպիանին եւ Միջազգային քրեական դատարանին կողմէ հետախուզուող երեխաներու իրաւունքներու յանձնակատար Մարիա Լվովա-Պելովա:

Ուքրանիոյ պատերազմին ընդդիմացող «Եապլորո» կուսակցութիւնը համամասնական ընտրութիւններուն չի մասնակցիր: Ռուսիոյ Գերագոյն դատարանը չեղեալ նկատած էր կուսակցութեան դաշնակցային ցուցակի ար-



ձանագրումը, իսկ աւելի ուշ մերժած այդ որոշման դէմ բողոքը:

«Եապլորո»-ի որոշ թեկնածուներ ընտրութիւններուն կը մասնակցին միայն մեծամասնական ընտրատարածքներուն մէջ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԱՄԴԱՐ ԻՓԷԿԵՆ» ԹԱՏԵՐԱՄԻՈՒՄԸ  
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՏԵ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՏԱՐԱԿԱԳԱՆ 95-ԱՍԵՆԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ  
Արցախի Նուիրում՝  
ՊԱՏՄԱՄԵՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱԳՈՒԹԵԱՆ 3 ՀԱՏՈՐՆԵՐՈՒ

ՇՈՒՐԱՇԱՆՈՒԷՄ

ԵՒ  
ԱՐՑԱԽԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ  
ՇՈՒՐԱՇԱՆՈՒԷՄ

Զորեքշաբթի,  
23 սեպտեմբեր 2026  
երեկոյեան ժամը 7:00-ին,  
Համազգայինի  
«Լիւսի Թիթիւնճեան»  
ցուցասրահին մէջ:

Արցախ. Անավարտ Պատերազմ  
Artsakh: The Unfinished War  
Арцах: Незавершённая Война

Յու ջամանիդ ար կը յարուճակուի  
մինչեւ 26 սեպտեմբեր,  
առաւօտեան ժամը 9:00 էն  
երեկոյեան ժամը 7:00:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՊԱՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՊԱՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՊԱՏԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կազմակերպութեամբ  
«Յակոբ Տէր Մելքոնեան»  
Թատերասրահի Վարչութեան

ԵՐԵՒԱՆԵԱՆ ԵՐԵՎՈՅ  
Երգահանութիւն

Ելոյթ կ'ունենան՝ Նորայր Գազանճեան, Շաքէ Պաղտասաբեան,  
Սոնա Մանճիկեան, Ղազար Բեռնիկեան եւ Սերժիօ Սիարոնեան,  
մասնակցութեամբ լիբանանահայ երաժիշտներու,  
ղեկավարութեամբ՝ Սերժիօ Պաղտասաբեանի:

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 21 Սեպտեմբեր 2026-ի երեկոյեան ժամը 8:00-ին,  
«Յ. Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ:

Տոմսերը ապահովել հեռաձայնելով 03 852712 թիւին եւ կամ ելոյթին օրը՝ կիշէէս:  
Ասկ՝ 10\$

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԳԱՄԴԱՐ ԻՓԷԿԵՆ» ԹԱՏԵՐԱՄԻՈՒՄԸ  
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՏԵ

ԴՈՒ՝ ՍԻՐՍԻՐԸ ԳՈՒՂ

Արցախ. Անավարտ Պատերազմ  
Artsakh: The Unfinished War  
Арцах: Незавершённая Война

Յու ջամանիդ ար կը յարուճակուի  
մինչեւ 26 սեպտեմբեր,  
առաւօտեան ժամը 9:00 էն  
երեկոյեան ժամը 7:00:

Տոմսերու համար հեռաձայնել 03-852712 թիւին,  
ինչպէս նաեւ Ելոյթի օրերը կիշէէս: